Վ Ճ Ի Ռ
Հանուն Հայաստանի Հանրապետության

01 հունիսի 2010թ . ք. Գյումրի
վարչական գործ թիվ ՎԴ5/0949/05/09

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը
դռնբաց դատական նիստում նախագահությամբ՝

Դատավոր	էդ. Նահապետյանի
Քարտուղարությամբ	Մ. Ասատրյանի
Մասնակցությամբ՝ Հայցվոր՝	”Առավոտ օրաթերթ” ՍՊ ընկերություն ՀՎՀՀ՝ 02359022 ՊԳՎՀ՝ 02 ԱՕ 04688 Ներկայացուցիչ՝ Կ. Մեժլումյան
Պատասխանող՝	Շիրակի մարզպետ՝ Լիդա Նանյան Ներկայացուցիչ՝ Գ. Բաղդասարյան Գ. Ժապոյան, Ս. Գրիգորյան

քննելով վարչական գործն ըստ հայցի ”Առավոտ օրաթերթ” ՍՊ ընկերության ընդդեմ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանի՝ “Շիրակի մարզպետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին”

ՊԱՐԶԵՑ

1. *Գործի դատավարական նախապատմությունը.*

Հայցվոր ”Առավոտ օրաթերթ” ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Հանայստանի Հանրապետության Վարչական դատարանի Գյումրու նստավայր, որը դատարան մուտք է եղել 09.12.2009 թվականին, գործը վարույթ է ընդունվել 16.12.2009 թվականին, նշանակվել է նախնական դատական նիստ 29.01.2010 թվականին, 19.03.2010 թվականին որոշում է կայացվել վարչական գործը դատաքննության նշանակելու մասին: 23.04.2010 թվականին հայցվորի կողմից դատարան է ստացվել հաշտության համաձայնություն:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվորն իր պահանջի հիմքում ընկած հանգամանքները դատարանին է ներկայացրել հետեւյալ պատճառաբանությամբ.
“Առավոտ” թերթի մարզերի եւ Սփյուռքի էջի պատասխանատու, լրագրող Արամ Զաքարյանը 19.08.2009թ-ին ՀՀ բոլոր մարզպետներին, այդ թվում Շիրակի մարզպետ Լիդա Նանյանին՝ marzpetaran@shirak.region.am, grigoryansam@shirak.region.am էլեկտրոնային փոստի հասցեով հետեւյալ բովանդակությամբ տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել Շիրակի մարզպետ Լիդա Նանյանին.

Հարցում

Հարգելի տիկին Նանյան
Ինչպես հայտնի է՝ սկսած 2005 թվականից, ՀՀ պետական բյուջեով, բացի մարզպետարանների պահպանման ծախսերից, “Այլ նպաստներ բյուջեից” տողով ՀՀ մարզպետարանները գումարներ են ստանում: 2005, 2006, 2007 թվականներին յուրաքանչյուր մարզպետարան ստացել է 10-ական միլիոն դրամ, իսկ 2008 եւ 2009 թվականներին՝ 20-ական միլիոն:
Խնդրում եմ պատասխանել հետեւյալ հարցերին:

1. Ի՞նչ նպատակներով են ծախսվել այդ գումարները՝ ըստ տարիների:
2. Խնդրում եմ մանրամասնել՝ ամեն տարի քանի՞ որոշում է կայացվել, ինչքա՞ն գումար է ծախսվել ամեն որոշմամբ:

Կանխավ շնորհակալությամբ՝ “Առավոտ” թերթի մարզերի եւ Սփյուռքի էջի պատասխանատու Արամ Զաքարյան”:

Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով: Հարցումները առ այսօր պահպանվում են “Առավոտ” օրաթերթի էլեկտրոնային հասցեներից մեկի “Ուղարկված նամակներ” բաժնում: Հարցմանը պատասխանել են մարզպետարաններից մեծ մասը, իսկ Շիրակի, Լոռու եւ Գեղարքունիքի մարզպետները չեն պատասխանել: Նշված փաստը հաստատվում է կից ներկայացվող երկու պատասխաններով /բոլոր պատասխանները ներկայացնելու անհրաժեշտություն չկա/:

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. “Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է”:

27.1 հոդվածի համաձայն. “Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք”: Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաեւ “Զանգվածային լրատվության մասին” ՀՀ օրենքում, որի 3-րդ հոդվածով, որի 1-ին կետի համաձայն՝ զանգվածային լրատվությունը /այսուհետ՝ լրատվություն/՝ անսահմանափակ թվով անձանց համար հասանելի տեղեկատվության

տարածումն է, որի հիմնական նպատակն է ապահովել մարդու սահմանադրական իրավունքը՝ ազատորեն, անկախ պետական սահմաններից՝ փնտրելու, ստանալու եւ տարածելու տեղեկություններ ու գաղափարներ: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, հանդես է գալիս որպես հասարակական պարտք կատարող անձ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. “Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների վրա”: Նույն օրենքի 6 հոդվածի 1-ին մասի համաձայն. “Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը”:

Նույն օրենքի 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Ի խախտումն Սահմանադրությամբ եւ օրենքով երաշխավորված հայցվորի իրավունքների ու պատասխանողի պարտականության, պատասխանողը չի տրամադրել 19.08.2009թ. հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ պարտավոր էր տրամադրել: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի 189.7. հոդվածը պատասխանատվություն է սահմանում տեղեկություն տալու պարտականությունը չկատարելու համար, որի համաձայն. “Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով”: Նույն օրենսգրքի 223 հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են սույն օրենսգրքի 189.7 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

ՀՀ դատական օրենսգրքի 3 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի ու 4-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանն առաջին ատյանի դատարան է: Գտնում են, որ եթե դատարանը գործի քննության ընթացքում հաստատված համարի պատասխանողի կողմից հայցվող տեղեկատվությունը չտրամադրելու փաստը, արդարացի իրավունք ունեն դատարանից հայցել 50.000 դրամի չափով վարչական տույժի ենթարկելու պատասխանողին իր ապօրինի արարքի /անգործության/ համար, որն արտահայտվել է՝ օրենքով սահմանված իր պարտականություններից խուսափելու՝ այն է հայցված տեղեկատվությունը չտրամադրելու արարքով:

Գտնում են նաեւ, որ տեղեկատվություն չտրամադրած պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելը այդ փաստը հաստատված համարող դատարանի պարտականությունն է: Հայցվորը խնդրել է դատարանին ոչ իրավաչափ ճանաչել Շիրակի մարզպետ Լիդա Նանյանի անգործությունը, որն արտահայտվել է հարցված տեղեկատվությունը չտրամադրելով եւ պարտավորեցնել 5-օրյա ժամկետում

սպառիչ տեղեկատվություն տալու այն մասին, թե ինչ նպատակներով են ծախսվել “Այլ նպաստներ բյուջեից” տողով Շիրակի մարզպետարանին 2005, 2006, 2007, 2008 եւ 2009 թվականներին հատկացված գումարները, ամեն տարի քանի որոշում է կայացվել, ինչքան գումար է ծախսվել ամեն որոշմամբ: 23.04.2010 թվականին հայցվորի կողմից ստացվել է հաշտության համաձայնություն:

3. Պատասխանող կողմի իրավական դիրքորոշումը.

Պատասխանող՝ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը հայցադիմումին ներկայացրել է գրավոր պատասխան, որով հայտնել է. հայցադիմումում նշված է, որ կից ներկայացվում են հարցման օրինակը եւ պատասխանները, սակայն պատասխանները ինչպես մարզպետարան ուղարկված, այնպես էլ դատարան ներկայացված հայցադիմումներին կցված չեն: Այդ պատճառով հնարավոր չէ պարզել դրանց վերաբերելիության հարցը: Հայցադիմումում նաեւ նշված է հետեւյալը. “Նշված փաստը հաստատվում է հարցման օրինակով:

Հարցումները առ այսօր պահպանվում են “Առավոտ” օրաթերթի էլեկտրոնային հասցեներից մեկի “Ուղարկված նամակներ” բաժնում”: Եթե դա հարցում գրելն է, ապա դա վեճի առարկա չի կարող հանդիսանալ, իսկ սույն դատական գործով վեճի առարկա կարող է լինել միայն տեղեկատվություն չտրամադրելը: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ հայցվորի կողմից հիմնավորվի գրված /ուղարկված/ հարցումը մարզպետարանի կողմից ստանալու փաստը: Իսկ հարցման օրինակը հայցադիմումին կցելը, “Առավոտ” օրաթերթի էլեկտրոնային հասցեներից մեկում պահպանելը մարզպետարանի կողմից հարցումը ստանալու հիմնավորում չի կարող հանդիսանալ:

Վերոգրյալ հարցումը ՀՀ Շիրակի մարզպետարանը չի ստացել եւ չէր ել կարող ստանալ: 2003 թվականին ՄԱԿ-ի կողմից մարզպետարանում տեղադրված բաժնիչը /սերվերը/, որը սպասարկում էր shirak.region.am կայքի էլեկտրոնային փոստի հասցեները, ավելի քան մեկ տարի չի գործում: Ներկայումս մարզպետարանը օգտվում է shirak@mta.gov.am, shirak.press@mta.gov.am էլեկտրոնային հասցեներից: Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

Հայցվորը որեւէ ապացույց չի ներկայացրել, որով հիմնավորի լրագրող Արամ Զաքարյանի 19.08.2009 թվականի հարցումը մարզպետարանի կողմից ստանալու փաստը: Բնական է, որ մարզպետարանը կարող է պատասխանել /տեղեկատվություն տրամադրել/ միայն հարցում ստանալու դեպքում, եւ առնվազն անհասկանալի է չստացված հարցմանը պատասխան /տեղեկատվություն/ պահանջելու հայցվորի դիրքորոշումը: Պատասխանողը խնդրել է դատարանին “Շիրակի մարզպետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին” հայցը մերժել:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցողփաստերը.

1. 19.08.2009 թվականի հարցման օրինակը
2. Հայցվորի կողմից ներկայացված հաշտության համաձայնությունը:

5. Դատարանի իրավական վերլուծությունները.

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանը գտնում է, որ վարչական գործն ենթակա է կարճման հետեւյալ պատճառաբանությամբ.

Հայցվոր "Առավոտ օրաթերթ" ՍՊ ընկերությունը եւ Շիրակի մարզպետարանը 23.04.2010 թվականին դատարան են ներկայացրել ստորագրված եւ կնքված հաշտության համաձայնություն: Նկատի ունենալով, որ կողմերին պարզաբանված եւ հայտնի են վերջիններիս միջեւ կայացված հաշտության համաձայնությունը դատարանի հաստատմանը ներկայացնելու եւ այն դատարանի կողմից հաստատելու դատավարական հետեւանքները, պարզելով, որ ներկայացված հաշտության համաձայնությունը չի հակասում օրենքին, այլ իրավական ակտերին, չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, դատարանը գտավ, որ այն պետք է հաստատել վճռով:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ կետի՝ "Վարչական վարույթի ընթացքում կողմերի հաշտության համաձայնության գալը համարվում է հայցվորի հրաժարում հայցից": Իսկ համաձայն նույն հոդվածի 1-ին կետի՝ "Վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ 5/ հայվորը հրաժարվել է հայցից":

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կողմերի միջեւ կայացված հաշտության համաձայնությունը ձեւակերպվում է գրավոր: Իսկ նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 7-րդ կետի կամաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը:

Ուսումնասիրելով գործում եղած փաստաթղթերը եւ կողմերի ներկայացրած հաշտության համաձայնությունը՝ դատարանը գտնում է, որ այն չի հակասում օրենքին եւ այլ իրավական ակտերին, չի խախտում այլ անձանց իրավունքները եւ օրինական շահերը, ուստի այն ենթակա է հաստատման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ, 130-րդ, 133-րդ, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Հաստատել հայցվոր "Առավոտ օրաթերթ" ՍՊ ընկերության ընդդեմ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանի՝ "Շիրակի մարզպետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետեւանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու եւ վարչական տույժի ենթարկելու պահանջների մասինկայացված հաշտության համաձայնությունը՝ հետեւյալ բառացի շարադրանքով.

"ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

"Առավոտ օրաթերթ" ՍՊ ընկերության տնօրեն Պետրոս Պետրոսյանը եւ ՀՀ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանը թիվ ՎԴ5/0949/05/09 վարչական գործով ցուցաբերելով բարի կամք, կնքում են սույն հաշտության համաձայնությունը հետեւյալի մասին.

1. "Առավոտ օրաթերթ" ՍՊ ընկերության տնօրեն Պետրոս Պետրոսյանը հրաժարվում է հայցից, իսկ ՀՀ Շիրակի մարզպետարանը սույն հաշտության համաձայնության հիման վրա գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից 5-օրյա ժամկետում "Առավոտ օրաթերթ" ՍՊ ընկերությանը

տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե ըստ տարիների ինչ նպատակներով են ծախսվել “Այլ նպաստներ բյուջեից” տողով ՀՀ Շիրակի մարզին 2005, 2006, 200 թվականներին հատկացված 10-ական միլիոն դրամները, եւ 2008, 2009 թվականներին հատկացված 20-ական միլիոն դրամները՝ հայտնելով, թե ամեն տարի քանի որոշում է կայացվել եւ ինչքան գումար է ծախսվել ամեն որոշմամբ:

2. Կողմերը դատարանին են ներկայացնում սույն հաշտության համաձայնությունը եւ խնդրում գործի վարույթը կարճել:
3. Կողմերը տեղյակ են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին”:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ ԷԴ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՀ դատական օրենսգրքի 35-36 հոդվածներով սահմանված ժամկետում վճիռը չի բողոքարկվել եւ մտել է օրինական ուժի մեջ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ ԷԴ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ